## ԳԼՈՒԽ ՃԵ.

*Ծանդրութիւն կշռոց մերոց 'ի վերայ աշխարհին հայոց այսպէս լիցի.*

*Կրտսերն մի ցորեանի ծանդրութիւն։*

*Ամենայն չորս ցորեան մի դրէթ որում աշխարհ ճանաչէ դրամն։*

*24 դրէթն մի դրամ, և եթէ երծաթ, եթէ պղինձ պարտէ ունիլ ծանդրութիւն 24 դրէթի։*

*60 դրէթն մին դահեկան երծաթի և կամ ոսկոյ։*

*124 դրէթն մին տէրունի երծաթէ և կամ ոսկոյ։*

*24000 դրէթն մին կշիռ։*

*480000 դրէթն մի բեռն։*

*Այսպէս կշռեսցի ծանդրութիւն ամենայն կշռելոյ իրաց։*

## ԳԼՈՒԽ ՃԶ.

*Չափս երկրի ամենայն իրաց համարեսցի այսպէս.*

*Նախ 1. մատնաչափ որ է 'ի լայնութիւն միոյ միջամատի։*

*2. մատնաչափն անուանի. մի յօդ*

*4. մատն » մի ուղուկ*